

## Լիլիթ Մակարյան

Պատմական գիտ. թեկնածու, ԵԿՏԱ-ի միջազգային հարաբերությունների  
ամբիոնի դասախոս

### ՆՈՎՈԳԱՐԵԿՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՅՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

20-րդ դ. քաղաքական պատմությունը բնութագրվում է մի շարք կարևոր և վճռորոշ իրադարձություններով, որոնցից մեկն էլ ԽՍՀՄ փլուզման գործընթացն էր, որի հետևանքները չափազանց մեծ էին և դեռ շարունակում են ազդել համաշխարհային քաղաքական նոր զարգացումների վրա: Այդ կարևոր իրադարձությունը մեկնաբանում, վերլուծում են բազմաթիվ պատմաբաններ, քաղաքագետներ, շարքային քաղաքացիներ, որոնք առաջ են քաշում խորքային պատճառներ՝ չլուծված ազգային հարց, միահեծան կոմունիստական գաղափարախոսության արժեզրկում, կապիտալիզմի հետ մրցավազքում դիրքերի զիջում, կառավարման հին մեթոդներից չիրաժարվել և այլն:

Ինչ խոսք, վերը թվարկված գործոններն այս կամ այն չափով իրենց ներգործությունն են ունեցել ԽՍՀՄ-ի փլուզման վրա, որի հետևանքով չեզոքացվեցին տասնամյակների ընթացքում ձեռքբերված հաջողությունները, ազգային խնդիրների լուծման քաղաքական գործընթացները տեղափոխվեցին քաղաքացիական անկարգությունների հարթակ, իսկ անհանդուրժողական և ծայրահեղական դրսևորումները ազգերի մեջ սերմանեցին թշնամության գաղափարը, որի կործանարար ալիքը դեռևս շարունակում է սպառնալ նաև ազգային անվտանգությանը:

ԽՍՀՄ-ում հռչակված վերակառուցման քաղաքականության պայմաններում տեղի ունեցող գործընթացները նոր իրավիճակներ էին թելադրում, և որոշ միութենական հանրապետությունների համար Միության հետագա գոյության անհրաժեշտությունը հետզհետե դարձել էր աննպատակահարմար: Դեռևս 1990 թ. մարտին ԽՍՀՄ ժողպատգամավորների 3-րդ համագումարում, ուր Մ. Գորբաչովն ընտրվեց ԽՍՀՄ նախագահ, որոշում կայացվեց քննարկել Միութենական նոր պայմանագիր կնքելու հարցը: Խորհրդային Միության ղեկավարը նոր պայմանագրի միջոցով ցանկանում էր կանխել փլուզման գործընթացը:

1991 թ. մարտի 17-ին ԽՍՀՄ-ում անցկացվեց հանրաքվե, որի միջոցով Մ. Գորբաչովը ցանկանում էր իրականացնել Խորհրդային Միության պահպանմանն ուղղված իր ծրագրերը: Հանրաքվեին մասնակցած 148,6 մլն քաղաքացիներից (ծայնի իրավունք ունեցողների 80%-ը) 113,5 մլն մարդ (76,4%) կողմ արտահայտվեց Միության պահպանմանը<sup>1</sup>: Մերձբալթյան երկրները, Հայաստանը, Վրաստանը, Մոլդովյան հրաժարվեցին մասնակցել հանրաքվեին, սակայն, այնուամենայնիվ, դրան անդրադարձան առանձին տեղական խորհուրդներում և աշխատավորական կոլեկտիվներում<sup>2</sup>:

Միութենական պայմանագրի առաջին տարբերակի հրապարակումից հետո հատկապես կոշտ վերաբերմունք դրսևորեց Ռուսաստանը՝ հանձին Բ. Ելցինի՝ նրա-

<sup>1</sup> Стів Новейшая история отечества XX века, т. II, Москва, 1999, с. 376-377:

<sup>2</sup> Стів История Государства и права России, под. Ред., С. А., Чибиряева, Москва, 1998: [http://www.gumer.info/bibliotek\\_Buks/Pravo/IstPrav/86.php](http://www.gumer.info/bibliotek_Buks/Pravo/IstPrav/86.php).

նուն տեսնելով նախկին բացասական երևույթները: Վերջինս ցանկանում էր երկկողմանի պայմանագրեր կնքել առանձին հանրապետությունների հետ: Նախատեսվում էր «Չորսի համաձայնագիր»-ը (Ռուսաստան, Ուկրաինա, Բելոռուս, Ղազախստան): Հետագայում այդ գործընթացին Ղազախստանը չմասնակցեց<sup>1</sup>:

1991 թ. ապրիլի 23-ին ԽՍՀՄ նախագահի մերժման կողմից նստավայր Նովո-Օզարևոն կայացավ միութենական ինը հանրապետությունների ղեկավարների (ՌԽՖՍՀ, Ուկրաինա, Բելոռուս, Ուզբեկստան, Ղազախստան, Ադրբեյջան, Ղրղզստան, Տաջիկստան, Թուրքմենստան) և ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովի միջև հանդիպում, ուր արվեց «Միասնական հայտարարություն», որը լրագրողների կողմից ստացավ «9+1» անունը<sup>2</sup>:

Դեռևս 1991 թ. ապրիլին ԽՄԿԿ Կենտկոմի պլենումում բազմաթիվ մարզկոմների քարտուղարներ պահանջում էին Մ. Գորբաչովի հրաժարականը ԽՄԿԿ Գլխավոր քարտուղարի պաշտոնից: Վերջինս այդ պաշտոնը կարողացավ պահպանել հենց նովոօզարևյան գործընթացում 9 պետությունների ղեկավարների հետ ձեռք բերած համաձայնության շնորհիվ<sup>3</sup>: Հայտարարությունը ենթադրում էր, որ պայմանագրի ստորագրումից և վավերացումից ոչ ուշ քան 6 ամսվա ընթացքում պետք է ընդունվեր նոր Սահմանադրություն, որի մի մասը պետք է կազմեր Միութենական պայմանագիրը<sup>4</sup>: Հայտարարությանը չէին միացել մերձբալթյան երկրները, Հայաստանը, Վրաստանը և Մոլդովան, որոնք դրա համար առանձին պատճառներ ունեին:

Ռուս պատմաբան Ա. Ալեքսեևը նովոօզարևյան գործընթացը բաժանում է երկու փուլի՝ 1991 թ. ապրիլի 23-ից հուլիսի 23-ը, երբ քաղաքական պայքար էր ընթանում Կենտրոնի և հանրապետությունների միջև լիազորությունների ընդլայնման շուրջ, և 1991 թ. հուլիսի 29-30-ը, երբ Նովո-Օզարևոն Մ. Գորբաչովի, Բ. Ելցինի և Ն. Նազարբաևի միջև սկսվեցին գաղտնի բանակցություններ<sup>5</sup>:

1991 թ. մայիսի 24-ին Նովո-Օզարևոն Նախապատրաստական կոմիտեի առաջին նիստին մասնակցում էին միութենական և ավտոնոմ հանրապետությունների գրեթե բոլոր նախագահները<sup>6</sup>: Այս գործընթացին չմասնակցող հանրապետություններից յուրաքանչյուրն ուներ իր պատճառներն ու մեկնաբանությունը: Մասնավորապես 1991 թ. մայիսի 31-ին ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին ուղղած պատասխան մամակում ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունն այդ նիստին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի մասնակցությունը համարել էր աննպատակահարմար՝ պատճառաբանելով, որ իրադրությունը տարածաշրջանում շարունակում է մնալ անչափ լարված, որևէ ներգործում միջոց Կենտրոնի կողմից չի ձեռնարկվում Գետաշենի, Մարտունաշենի, Բերդաձորի և Հադրութի շրջաններից տեղահանված հայ բնակչությանն իր մշտական բնակության վայրերը վերադարձնելու, հարյուրավոր պատանդներին ազատ արձակելու ուղղությամբ, Հայաստանի տարածք են թափանցում զին-

<sup>1</sup> Стѹ Политическая история России, Москва, 1998, с. 641:

<sup>2</sup> Стѹ История России новейшая время 1945-1999 гг., Москва, 2000, с. 286:

<sup>3</sup> Стѹ История отечества XX век, изд. Дом “Дрофа”, 1995, с. 587:

<sup>4</sup> Стѹ “Правда”, № 126, 1991 г.:

<sup>5</sup> Стѹ **Алексеев В. В.**, Драма Ново-Огаревского процесса: Последняя попытка сохранить Советский Союз, “Казахстанский опыт построения суверенного государства и гражданского общества, история и уроки. Матлы междунар. Науч.-теор. конференции”, Актобе, 2011: <http://istina.imec.msu.ru/publications/article/1307823/>

<sup>6</sup> Стѹ “Правда”, № 126, 1991 г.:

ված ավազակախմբեր, որոնք ահաբեկում են խաղաղ բնակչությանը, Ադրբեջանի տարածքից պարբերաբար հրետակոծվում են հայկական գյուղերը<sup>1</sup>:

Իր հերթին Մոլդովայի նախագահ Միրչա Սնեգուրը Բուխարեստում հայտարարեց, որ Մոլդովան չի միանում «9+1» բանաձևին, քանի որ իրենց չի բավարարում ֆեդերացիան, որը պահպանում է ունիտար պետության հատկանիշները, և ցանկանում են լինել ընկերակցության անդամ թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում<sup>2</sup>:

Նոսկոգարկյան գործընթացին չմասնակցող հանրապետությունների վրա ճնշում գործադրելու համար ԽՍՀՄ վարչապետի առաջին տեղակալ Վլ. Շչերբակովը հայտարարեց, որ եթե մերձբալթյան հանրապետությունները, Վրաստանը կամ Հայաստանը չստորագրեն Միութենական դաշնագիրը, ապա Կենտրոնն այդ հանրապետությունների հետ առևտրատնտեսական հարաբերությունները կփոխադրի միջազգային նորմերի հուն<sup>3</sup>:

Այդ օրերին Հայաստանում իրադրությունը ծայրահեղ լարված էր, հասարակության ուշադրությունն ուղղված էր միայն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության ապահովմանն ու կազմակերպմանը: 1991 թ. հուլիսի 18-ին կայացած ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության հերթական նիստում քննարկվեց նաև Նախապատրաստական կոմիտեի հուլիսի 23-ի նիստին Հայաստանի մասնակցության հարցը: Որոշման մեջ նշվում էր, որ 1991 թ. սեպտեմբերի 21-ի կայանալիք Հայաստանի Հանրապետության հանրաքվեն ժողովրդավարական ճանապարհով կհստակեցնի Միության հետ հարաբերությունների բնույթը, ուստի մինչ այդ Գերագույն խորհրդի նախագահությունը ձեռնպահ է մնում կոնկրետ գործողություններից<sup>4</sup>:

Դաշնագրի նախագծով Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը պետք է դառնար Խորհրդային Ինքնիշխան Հանրապետությունների Միություն<sup>5</sup>: Այնտեղ, մի կողմից նշվում էր, որ մասնակից յուրաքանչյուր հանրապետություն ինքնիշխան է և Միության տարածքը բաղկացած է այն կազմող բոլոր պետությունների տարածքներից (հոդված 3), մյուս կողմից՝ ԽՍՀՄ-ի լիազորություններից ամենաառաջինը Միության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությունն էր (հոդված 5): Դաշնագրի մի շարք դրույթներ ևս խոչընդոտում էին հանրապետությունների անկախացման գործընթացին: Բացի այդ, նշվում էր, որ պետությունների միջև սահմանների փոփոխումը հնարավոր էր միայն այն դեպքում, եթե այն չի հակասում Դաշնագրի մյուս մասնակիցների շահերին (հոդված 3)<sup>6</sup>:

Միութենական դաշնագրի հրապարակած նախագիծը քննարկելու նպատակով 1991 թ. հունիսի 29-ին Ռուսաստանում հրավիրվեց «Մոսկովյան ամբիոնի» նիստ, որի ընթացքում Ելենա Բոները, Լեոնիդ Բատկինը, Անդրեյ Նույկինը իրենց ելույթներում բացահայտեցին համաձայնագրի շատ կետերում տեղ գտած իրավական անհեթեթ դրույթները: Ժողովի մասնակիցները կրկին դատապարտեցին մարդու իրավունքների ոտնահարումը ԼՂԻՄ-ում և Հայաստանի տարածքում՝ պայմանավորված հատուկ ջոկատայինների գործողություններով: ԽՍՀՄ նախագահի անունով ընդունված հեռագրում քաղաքական խումբն իր մտահոգությունն էր հայտնում խորհրդա-

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», թիվ 120, 1991 թ.:

<sup>2</sup> Տե՛ս «Ազգ», թիվ 37, 1991 թ.:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, թիվ 35:

<sup>4</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», թիվ 154, 1991 թ.:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, թիվ 146:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, թիվ 140:

յին զորամասերի կողմից առևանգված Հայաստանի ՆԳՆ 54 աշխատակիցների՝ ադրբեջանական բանտերում պահելու ու հոգեներգործիչ նյութերի օգնությամբ վերջիններից ցանկալի խոստովանություններ կորզելու առնչությամբ՝ ԽՍՀՄ նախագահին խնդրելով քննության առնել խորհրդային սպաների գործողությունների օրինակացությունը<sup>1</sup>:

1991 թ. հուլիսի 23-ի Նովո-Օգարևում կայացած հանդիպմանը, որի ժամանակ վերջնական մշակման պետք է ենթարկվեր Միութենական պայմանագրի տեքստը, մասնակցում էր նաև ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը<sup>2</sup>: Այստեղ նորից շոշափվեց Ղարաբաղի հարցը: Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը խոստացավ դուրս բերել հատուկ ջոկատայինների զորամասերը և դադարեցնել անձնագրային ռեժիմի ստուգումները ԼՂԻՄ-ին հարող հայկական գյուղերում<sup>3</sup>: Նույն օրը հայտնի դարձավ, որ ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դ. Յազովը հրամայել է Շահումյանի շրջանում օգտագործել մարտական ինքնաթիռներ: ՌԽՖՍՀ ժողպատգամավորներ Ա. Շաբադը և Վ. Սմիռնովը այդ մասին բողոքի հեռագիր էին ուղարկել ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին: Վ. Սմիռնովը դիմել էր նաև Անդրկովկասյան զինված ուժերի օդաչուներին՝ չկատարել վերևից տրվող հանցավոր հրամանները<sup>4</sup>:

Խորհրդային Միության ղեկավարությունը իր բոլոր միջոցները, այդ թվում՝ ուժային, օգտագործում էր արյան մեջ խեղդելու Հայաստանում ծավալվող անկախացման ձգտումները, իսկ Լեռնային Ղարաբաղը դարձրել էր հայ ժողովրդի վրա ազդելու գործիք:

Այդ ժամանակ Թուրքիայի ղեկավարությունը նույնպես սխալվեց իր քաղաքական հաշվարկներում: Մասնավորապես «Հյուրիյեթի» քաղաքական մեկնաբան Էրթուղրուլ Օզքոքը նույն թերթի 1991 թ. հուլիսի 24-ի համարում տեղեկացնում է, որ Ջորջ Բուշ Ավագը, որը պաշտոնական այցով գտնվում էր Թուրքիայում, նախագահ Թ. Օզալին հարցրել է. «Ի՞նչ եք մտածում, հայերը մինչև ու՞ր կհասցնեն գործը»: Օզալը պատասխանել է. «Չեմ կարծում, որ նրանք գնան մինչև անկախություն: Ըստ երևույթին տեղ կզբաղեցնեն կոնֆեդերացիայի կազմում»<sup>5</sup>:

Մ. Գորբաչովի համառ ջանքերի շնորհիվ 1991 թ. օգոստոսի 20-ին Կրեմլի Գեորգիևյան դահլիճում նախատեսվում էր Միութենական պայմանագրի ստորագրում վեց հանրապետությունների պատվիրակությունների կողմից<sup>6</sup>: Սակայն ԽՍՀՄ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաները, օգտվելով Մոսկվայից Մ. Գորբաչովի բացակայությունից, օգոստոսի 19-ին պետական հեղաշրջման փորձ կատարեցին: Խռովարարները ստեղծել էին Արտակարգ դրության պետական կոմիտե (ԴԿԿՄ)<sup>7</sup>, որը, սակայն, հասարակության շրջանում չստացավ աջակցություն և հեղաշրջման փորձը ձախողվեց, իսկ 1991 թ. օգոստոսի 21-22-ին ԱԴՊԿ-ի անդամներն արդեն ձերբակալված էին<sup>8</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Երեկոյան Երևան», № 128, 1991 թ.:

<sup>2</sup> Տե՛ս «Ազգ», թիվ 46, 1991 թ.:

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», թիվ 159, 1991 թ.:

<sup>4</sup> Տե՛ս «Ազգ», թիվ 47, 1991 թ.:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Տե՛ս **Գորբաչև Մ. Ս.**, Августовский путч, Москва, 1991, с. 8.

<sup>7</sup> Տե՛ս Путч, хроника тревожных дней, Москва, 1991, с. 9:

<sup>8</sup> Տե՛ս Август-91, Москва, 1991, с. 99:

Իր հուշերում Բ. Ելցինը գրում է, որ 1991 թ. հուլիսի 29-ին Նովո-Օզարևում կայացած հանդիպմանը Մ. Գորբաչովի հետ գաղտնի քննարկել է որոշ գործիչների, մասնավորապես ՊԱԿ-ի նախագահ Վ. Կրյուչկովի, ՊՆ Դ. Յագովի պաշտոնանկության հարցը և իր հետ համաձայնելով՝ Ն. Նազարբանև ավելացրել է նաև ՆԳՆ Բ. Պուգոյին, Պետհեռուստառադիոընկերության ղեկավար Կրավչենկոյին, ԽՍՀՄ փոխնախագահ Գ. Յանակին: Նրանք որոշում են Միութենական դաշնագրի ստորագրումից անմիջապես հետո աշխատանքից հեռացնել նաև վարչապետ Վ. Պավլովին: Բ. Ելցինի կարծիքով իրեն անընդհատ գաղտնալսել են: Խռովարարները հավանաբար տեղյակ են եղել նաև այդ խոսակցությանը, ինչն էլ հենց նրանց դրդել էր 1991 թ. օգոստոսյան խռովության<sup>1</sup>: Բ. Ելցինն այդ խոսակցությունից առաջ Մ. Գորբաչովին խնդրել էր զրույցը վարել պատշգամբում՝ խուսափելու համար գաղտնալսումից: Սակայն այդ վտանգը հաշվի առնելով՝ դժվար թե նա այնքան անհեռատես գտնվեր և առաջ քաշեր բարձրաստիճան պաշտոնյաների պաշտոնանկության հարցը և կորզեր Մ. Գորբաչովի համաձայնությունը՝ առանց որևէ միտումի:

Շատ տարածված է նաև այն կարծիքը, որ խռովարարները դեմ էին նովոօզարևյան գործընթացին և միութենական նոր պայմանագրի ստորագրմանը, որով հանրապետություններին լայն ինքնիշխանություն էր տրվում<sup>2</sup>: Այդպես է կարծում նաև Մ. Գորբաչովը՝ խռովությունը համարելով նովոօզարևյան գործընթացի դեմ ուղղված ռեակցիա<sup>3</sup>:

Օգոստոսյան խռովության ձախողումից հետո Մ. Գորբաչովը նախապատրաստում էր Միութենական դաշնագրի նոր նախագծեր: 1991 թ. նոյեմբերի 14-ին Նովո-Օզարևում կայացած Պետխորհրդի նիստին 7 պետությունների ղեկավարներ համաձայնեցին մինչև տարեվերջ ստորագրել պայմանագիր միասնական կոնֆեդերատիվ պետության ստեղծման մասին: Նոյեմբերի 25-ին Նովո-Օզարևում նախատեսված էր դաշնագրի նախնական տեքստի ստորագրումը: Սակայն Բ. Ելցինը հրաժարվեց ստորագրել, որին պաշտպանեցին Վ. Շուշկևիչը և Ի. Քարիմովը: Ուկրաինայի և Ադրբեջանի լիդերներն ընդհանրապես չէին ժամանել Նովո-Օզարև<sup>4</sup>: Բ. Ելցինին չէր բավարարում դաշնագրով նախատեսվող պետության ձևը և ավելի շատ լիազորություններ էր պահանջում տալ հանրապետություններին:

Այս ամենի արդյունքում Բ. Ելցինի նախածեռնությամբ 1991 թ. դեկտեմբերի 8-ին Սինսկի Բելովեժսկ բնակավայրում համաձայնագիր ստորագրեցին Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսի ղեկավարները, որով ազդարարվեց ԽՍՀՄ-ի փլուզումը, և այն դադարեց որպես միջազգային կառույց գոյություն ունենալ<sup>5</sup>: Այդ որոշումը, որը տեղի էր ունենում ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովից և խորհրդային ժողովրդից գաղտնի, պատմության մեջ մտավ որպես «Բելովեժյան համաձայնություն»<sup>6</sup>: Այս փաստաթղթի իրավական կողմը վիճարկելի էր, քանի որ չէին ստորագրել ԽՍՀՄ մյուս հանրապետությունները: Եվ այն կարծես օրինականացնելու համար 1991 թ. դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում հանդիպեցին 11 հանրապետությունների ղեկավարները ու ստորագրե-

<sup>1</sup> Տե՛ս **Елцин Б. Н.**, Записки президента, Москва, 1994, с. 30: <http://www.yeltsin.ru/upload/iblock/fa7/zapis-kiprezidenta.pdf>

<sup>2</sup> Տե՛ս **Бюффа Дж.**, От СССР к России, Москва, 1996, с. 237:

<sup>3</sup> Տե՛ս **Горбачев М. С.**, Августовский путч, с. 8:

<sup>4</sup> Տե՛ս **Медведев Р.**, Советский Союз. Последние годы жизни. Конец советской империи, с. 563:

<sup>5</sup> Տե՛ս **Поляк Г. Б.**, Российская история, Москва, 1997, с. 302:

<sup>6</sup> **Արթահամյան Յ.**, Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011 թթ., Երևան, 2011, էջ 78:

ցին Հռչակագիր, ըստ որի պաշտպանվում էր Բելովեժսկյան համաձայնությունը: Դրանով վերջ տրվեց և՛ նովոօգարևյան գործընթացին, և՛ ԽՍՀՄ-ին<sup>1</sup>:

Միութենական նոր դաշնագրի և նովոօգարևյան գործընթացի մասին Լ. Տեր Պետրոսյանը որոշակի խոսեց միայն 10 տարի անց՝ 2011թ.՝ «Московские новости» օրաթերթին տված հարցազրույցում, ուր մասնավորապես նշեց. «Նոր միութենական համաձայնագիրն ամբողջությամբ ֆարս էր: Նրանք փորձում էին կանգնեցնել գործընթացը, որն այլևս հնարավոր չէր կանգնեցնել: Մինչ այդ ևս մի ֆարս էր եղել ԽՍՀՄ պահպանման մասին՝ 1991 թ. մարտի գորբաչովյան հանրաքվեն...»<sup>2</sup>:

Արտասահմանյան երկրներ հեռարձակվող «Мир и прогресс» ռադիոալիքի հաղորդումից տեղեկանում ենք նաև այդ ժամանակ Միմիստրների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանի՝ խորհրդային Միության կազմում Հայաստանի մնալու աննպատակահարմարության մասին Մոսկվայում մամլո ասուլիսի ժամանակ հնչեցրած տեսակետը, ուր մասնավորապես նա նշում է, որ խորհրդային գաղափարախոսությունը խորը չի ընկղմվել մեր ժողովրդի հոգում<sup>3</sup>: Վ. Մանուկյանի այս հարցազրույցից ակնհայտ է դառնում, որ Հայաստանի ղեկավարությունը մերժում էր ոչ թե Միութենական նոր դաշնագիրը, այլ ընդհանրապես խորհրդային համակարգը:

Մինչև այժմ չեն դադարում քննարկումներն ու վեճերը, թե արդյո՞ք ԽՍՀՄ փլուզումն օրինաչափ էր, պատմականորեն անխուսափելի, թե՞ Արևմուտքի մանրակրկիտ հաշվարկված ծրագիր: Կարող ենք փաստել, որ այն ունեցավ և՛ դրական, և՛ բացասական հետևանք: Մասնավորապես ցայսօր կարողանում ենք ապահովել Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունը, և տարածքը փաստացի ազատագրված է, ձեռք ենք բերել անկախություն և ազատություն կյանքի բոլոր բնագավառներում, որը, սակայն, հասարակության ոչ բոլոր շերտերն են ճիշտ հասկանում: Բայց չենք կարողանում լիովին վերականգնել քայքայված տնտեսությունը, որը արդյունք էր խորհրդային տնտեսական ընդհանուր համակարգից դուրս մնալուն, Հայաստանի իշխանությունները չկարողացան պահպանել խորհրդային Միությունից ժառանգած ունեցվածքը:

*Лилит Макарян, Ново-Огаревский процесс и Армения* – Для спасения СССР от развала М. Горбачев искал разные пути для подписания нового Союзного договора, и 23 апреля 1991 г. было принято единое объявление от имени президента СССР и высших государственных органов союзных республик, которое известно под названием “9+1”. В нем, в первую очередь, констатируется факт, что каждое государство является суверенным, а новое объединение должно было стать Союзом Суверенных Государств. Это объявление стало началом Ново-Огаревского процесса, за которым, тем не менее, последовал развал СССР и был подписан новый договор, который послужил основой для создания Содружества Независимых Государств.

*Lilit Makaryan, Novoogarevian process and Armenia* - To saving from the collapse the USSR M. Gorbachov was looking for ways for signing a new union treaty, and on April 23, 1991 a joint declaration was adopted by President of the USSR and Supreme Soviet Republics' highest state bodies, which is

<sup>1</sup> Տե՛ս Խրեστοմատիա по истории России, **Орлов А. С., Георгиев В. А.**, Москва, 2004, с. 552:

<sup>2</sup> <http://www.aaeurop.com/?p=5907>

<sup>3</sup> [http://www.historicus.ru/Soyuznii\\_dogovor\\_i\\_Armeniya/](http://www.historicus.ru/Soyuznii_dogovor_i_Armeniya/)

known as «9+1». Firstly it recorded that each state is independent, and the new union must be union of Sovereign States. This statement becomes the beginning of novoogarevian process, which was followed by the collapse of the USSR and new treaty was signed which was the basis for cooperation between the independent countries.

